ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 նոյեմբերի 2022թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Սեդրակ Կիրակոսյան

Անդամներ՝ Արեգ Ափոյան, Հայկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետի և սկսելու մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 06.11.2023թ-ին ժամը 11:00-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 07.11.2023թ.-ին ժամը 11:00-ին:

2. Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.

Չափաբաժնի հ/հ	Անվանումը	Հաստատված քանակը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսվող գին /ՀՀ դրամ/
1.	Ըմպելու ջուր	17689	1061340

3. Էլեկտրոնային աճուրդի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին մասնակցել է թվով 1 մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը /անունը/	ՀՎՀՀ	Հասցե	Հեռախոսահամար
1.	«Էվրի Դեյ» ՓԲԸ	09104669	Ք. Երևան, Դավիթ Բեկի 54/5	010-58-75-87

Հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած Մասնակից՝ «Էվրի Դեյ» ՓԲԸ-ի դիմում-հայտարարությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

4.Տեղեկություններ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ հարցումներն և պարզաբանումները ներկայացվում են ստորև.

ՀԱՐՑՈՒՄ 1. Հարգելի գործընկերներ ! Սահմանված պահանջի համաձայն պետք է մատակարարվի խմելու բարձրորակ աղբյուրի ջուր, քլորազտված, ակտիվացված ածուխի ֆիլտրով, 22ալցումից առաջ մանրէազերծված

ուլտրամանուշակագույն ֆիլտրով, շալցված 19 լիտր տարողությամբ այդ նպատակի համար նախատեսված պոլիմերային շերում: Մեր կողմից արտադրվող և շալցվող ջուրը տեխնոլոգիական առումով ամբողջովին համապատասխանում է ներկայացված ֆիլտրացման պահանջներին: Միաժամանակ մենք չունենք սեփական ջրի աղբյուր և որպես հումք օգտագործում ենք Գառնու ջրաղբյուրի ջուրը, որում առկա օգտակար միկրոէլեմենտների և օրգանոլեպտիկ բարձր ցուցանիշների շնորհիվ այն սպառողների շրջանում լայն ճանաչում է վայելու: Ելնելով վերոգրյալից խնդրում ենք պարզաբանել արդյոք հարկավոր է բացառապես բնական աղբյուրի խմելու ջուր, թե ընդունելի է նաև սեփական աղբյուր չունեցող մատակարարների կողմից մատակարարվող և գործող բոլոր սանիտարական նորմատիվներին համապատասխանող բարձրորակ խմելու ջրի մատակարարման հնարավորությունը: Կանխավ շնորհակալություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 1. Հարգելի գործընկեր, Ձեր հարցման հետ կապված հարկ ենք համարում նշել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանն անհրաժեշտ է մատակարարել մեր կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրերին համապատասխան խմելու ջուր: Ձեր կողմից արտադրվող և շալցվող ջուրը եթե ամբողջովին համապատասխանում է ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին, ապա այն կընդունվի որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից: Իսկ ինչ վերաբերում է սեփական ջրի աղբյուր ունենալուն, ապա տեխնիկական բնութագրում նման պայման դրված չէ և մեզ համար պարտադիր պայման է, որ մատակարարվող խմելու ջուրն ամբողջովին համապատասխանի հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին:

ՀԱՐՑՈՒՄ 2. Հարգելի գործընկերներ, Հարցման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հրավերով նշված է իրար հակասող երկու չափանիշ, այն է՝ աղբյուրի ջուր և քլորազերծում: Քլորազերծումը ֆիլտրացման փուլերից է, որի շրջանակներում ջրում առկա քլորը ֆիլտրացիայի արդյունքում հեռացվում է, իսկ աղբյուրի ջուրը քլորացված չէ, ուստի քլորազերծման պահանջը կիրառելի չինել չի կարող: Միաժամանակ խնդրում ենք հստակ պարզաբանել արդյոք մեր երկրում գործող տեխնիկական կանոնակարգով սահմանված խմելու ջուր արտադրող ընկերությունները կարող են մասնակցել հայտարարված մրցույթին: Կանխավ շնորհակալություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 2. Հարգելի գործընկեր, եթե Ձեր կողմից մատակարարվող աղբյուրի ջուրը քլորացված չէ, ապա պարզ է, որ լրացուցիչ քլորազերծման կարիք չկա: Իսկ ինչ վերաբերում է մրցույթին մասնակցելու իրավունքին, ապա այդ իրավունքը սահմանվում է Գնումների մասին ՀՀ օրենքով, ինչի մասին նշված է նաև Հրավերում:

ՀԱՐՑՈՒՄ 3. Հարգելի գործընկերներ, Խնդրում եմ որպես պատվիրատու հստակ պատասխանել արդյոք սույն ընթացակարգին բավարարում են խմելու ջուր մակնշմամբ ապրանքատեսակը, թե ոչ: Այս հարցի առաջացումը պայմանավորված է կազմված տեխնիկական բնութագրի երկիմաստ լինելով, ինչպես նաև Ձեր կողմից նախկին տարիներին հայտարարված նույնաբովանդակ հրավերի, դրանց վերաբերյալ տրված պարզաբանումների և կնքված մատակարարման պայմանագրերի համադրմամբ: Կանխավ շնորհակալություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 3. Հարգելի գործընկեր, նորից ևս մեկ անգամ նշում եմ, որ մեզ համար պարտադիր պայման է, որ մատակարարվող խմելու ջուրն ամբողջովին համապատասխանի հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին, որը չի կարող գնահատվել երկիմաստ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 22 ենթակետի՝ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

ՀԱՐՑՈՒՄ 4. Հարգելի գործընկերներ, Ցանկանում ենք ստանալ շատ պարզ հարցի մեթոդաբանական պատասխան, սակայն այդպես էլ չենք ստանում: Այսպես, փաթեթավորված խմելու ջրերի շրջանառության ոլորտը կարգավորվում է ԵԱՏՄ ՏԿ 044/2017 տեխնիկական կանոնակարգով: Համաձայն նշված կանոնակարգի՝ խմելու ջրի և աղբյուրի խմելու ջրի համար դրանց մշակման եղանակները տարբեր են: Ընդ որում՝ Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում նշված կանոնակարգի պահանջներին: Այստեղ որևէ կերպ մեր կողմից արտադրող ջրի տեխնիկական բնութագրի համապատասխանության մասին չէ

խոսքը, այլ Ձեր՝ որպես պատվիրատուի պահանջի հստակ ձևակերպման մասին է: Ուստի ևս մեկ անգամ խնդրում ենք պարզաբանել ձեռքբերվող ապրանքը պետք է լինի խմելու ջուր, թե աղբյուրի խմեու ջուր:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 4. Հարգելի գործընկեր, մատակարարող ըմպելու ջուրը պետք է լինի բնական աղբյուրի բարձրորակ խմելու ջուր, որը և նշված է տեխնիկական բնութագրում:

5. Մասնակցի գնային առաջարկը.

5.1. Մասնակցի կողմից առաջարկված նախնական և վերջնական գնային առաջարկները, ներկայացված են ստորև.

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	Էվրի Դեյ ՓԲԸ	1061340	884450	20 %	1061340	875140	20 %	1050168.00

6. Ընթացակարգի ընտրված՝ հաղթող, մասնակցին որոշելու և հայտարարելու մասին.

6.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

- N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Էվրի Դեյ» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին.

Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, ըստ որի՝

7.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի 1 չափաբաժի մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

7.2. Ընտրված՝ հաղթող, մասնակցի հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ՝_____ **Ս. Կիրակոսյան**

Քարտուղար՝_____ **Ն. Աբովյան**

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ **Ա. Ափոյան**

2. _____ **Հ. Հովհաննիսյան**